ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ՝ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎԱԾ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԹԵՄԱՅՈՎ

19.11.2015 11:22

Տեղեկացնում ենք, որ այսօր՝ 19.11.2015թ. ժամը 18.30-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ակումբը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ կազմակերպում է քննարկում-դասընթաց, որի շրջանակներում քննարկվելու է ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը: Ջեկուցող՝ Աննա Մարգարյան (նախագծի համահեղինակ, փաստաբան, ի.գ.թ.):

Դասընթացը տեղի կունենա ՀՀ փաստաբանների պալատում (հասցե՝ ք.Երևան, Ջաքիյան 2, 4-րդ հարկ):

Ակումբի նիստին մասնակցած փաստաբաններին հաշվարկվելու է 4 պարտադիր վերապատրաստման ժամ:

Գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել info@advocates.am էլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })